ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԵՎ ԽԱԺԱԿ ՍՐԲԱԶԱՆԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԹԵՄԻ 100-ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Սույն թվականի ապրիլի 29-ից մայիսի 2-ը տեղի ունեցավ ԱՄՆ հայոց Արևելյան թեմի հոգևորականաց տարեկան համագումարը՝ նախագահությամբ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի: Համագումարին ներկա էին 38 հոգևորականներ: Ներկաները հոտնկայս ունկնդրեցին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը, որում ասվում է. «... Դուք քաջ ու բարի հովուի յանձնառութեամբ նուիրեալ ծառայութիւն էք մատուցում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն եւ հոգեւոր սիրառատ օրհնութեամբ ջերմացնում ԱՄՆ Արևելեան թեմի բարեպաշտ մեր ժողովրդի կեանքը՝ յանուն նրանց հաւատքի զօրացման եւ ազգային-եկեղեցական կեանքի պայծառացման: Արդարեւ, շնորհ ունէք Դուք Ամենակարող Աստծուց՝ «որպէս ժիր մշակք այգւոյն Տեառն» ԱՄՆ Արեւելյան թեմում տարածելու Լուսաւորչեան կանթեղի հոգեւոր անմար լոյսը, որ դարեր շարունակ առաջնորդում եւ առաջնորդելու է մեր ժողովրդի ընթացքն առ Արարիչն Աստուած»:

Ի պատասխան Նորին Սրբության այս օրհնություն-պատգամի՝ համագումարի մասնակիցները Վեհափառ Հայրապետին ուղղեցին շնորհակալության պատասխան խոսք, որում ի մասնավորի ասվում է. «... Որպէս հաւատաւոր սպասաւորները Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի՝ այսու կու գանք յայտնելու մեր որդիական սէրն ու յարգանքը՝ մաղթելով Ձերդ Սրբութեան երկար, առողջ եւ արդիւնաւէտ տարիներ՝ ի պայծառութիւն Քրիստոսահիմն Մայր Աթոռին եւ մեր Ս.Եկեղեցիի»:

Քանի որ Խաժակ Սրբազանը 2002 թվականը թեմում հռչակել էր «Ս. Պատարագի տարի», ուստի օրակարգի առաջին նյութն էր «Ծխական խորհուրդներու անդամներուն և թեմական պատգամաւորներուն յատուկ Ս. Պատարագի ուսուցման յայտագիրը»: Հավաքված հոգևորականները խոսեցին իրենց ծխերում այս թեմայի շրջանակում կատարած աշխատանքների մասին:

Այնուհետև համագումարի աշխատանքներն ընթացան ենթախմբերում՝ քննարկման ու հոգևոր խորհրդածության նյութ ունենալով Ս. Պատարագի խորհուրդը և հատկապես «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» հոգևոր երգը:

Քննարկվեցին նաև հետևյալ հարցերը՝ «Ս. Հաղորդության բաշխման կերպը», «Քարոզի համար հարմար ժամանակը Ս. Պատարագի ընթացքում», «Ս. Պատա-

ռագի ընթացքում Ծխական խորհուրդների անդամները որպեղ պետք է լինեն» և «Խորհուրդների կապարումը Եկեղեցուց դուրս»:

Համագումարի ավարտին, հինգշաբթի, մայիսի 2-ին, Ս. Պատարարագ մատուցվեց, և համագումարին ներկա պատգամավորները հաղորդություն ընդունեցին:

Հոգևորականաց համագումարին հաջորդեց ԱՄՆ Արևելյան թեմի100-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովը՝ թեմի տարբեր ծխերից ընտրված 150 պատգամավորների մասնակցությամբ: Համագումարում հաջորդ քառամյա շրջանի համար առաջնորդ վերընտրվեց Խաժակ արքեպս. Պարսամյանը:

Ընտրությունից հետո ներկա բոլոր հոգևորականները թափոր կազմեցին և «Ուրախ լեր» շարականի երգեցողությամբ ժողովասրահ առաջնորդեցին վերընտրված առաջնորդին, ում ներկա պատգամավորները դիմավորեցին բուռն ծափահարություններով:

Սրբազանը, խոսելով առաջիկա անելիքների և ծրագրերի մասին, կարևորեց հատկապես առաջնորդարանի ու ծխերի միջև եղած կապի առավել խորացումը և նոր ծխերի կազմակերպումը: Շնորհակալություն հայտնելով իր վերընտրության համար, Սրբազան Հայրն ասաց. «Ինձի համար Աստուծոյ և Անոր Եկեղեցիին ծառայելը օրհնութիւն մըն է, և ես երախտապարտ եմ այդ օրհնութեան համար»:

Համագումարի մասնակիցներն առանձին նամակով դիմեցին Գարեգին Բ Վեհափառ Հայրապետին՝ ծանուցելով ընտրության արդյունքների մասին և խնդրելով վավերացնել այն, ի պատասխան որի Վեհափառ Հայրապետն օրհնության իր խոսքով վավերացրեց առաջնորդական ընտրությունը (տե՛ս էջ 13):